Քաղաքացիական գործ ԵԴ 2/8591/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19-ը հունիսի 2023թ. ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /դատավոր Ա. Մկրտչյան/, ուսումնասիրելով «Խաչ-Արմ» ՍՊ և «Էլ-Գա-Ման» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 31.03.2023թ. թիվ 596-Ա հրամանն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին

ՊԱՐԶԵՑ

Հայցադիմումը ներկայացվել և դատավոր Ա.Մկրտչյանին մակագրվել է 09.06.2023թ., 14.06.20223թ. հանձնվել դատավորի աշխատակազմին:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը բացակայում են, ուստի հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության

միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ,125-րդ,234.5-րդ,234.6-րդ,234.8-րդ,188-րդ,199-րդ,200-րդ հոդվածներով,Դատարանը

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ, եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2023թ.հուլիսի 21-ը:

Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու եղանակով:

Պատասխանող ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից պահանջել որոշումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում Դատարանին ներկայացնել ՀՀԷՆ-ԳՀԱՇՁԲ-22/66 ծածկագրով գնման գործընթացի՝ իր տիրապետության ներքոբոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և բողոքարկման ենթակա է:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

Digitally signed by MKRTCHYAN ARAM 1712720074
Date: 2023.06.19 14:50:51 AMT